

ՀԱՅԵՐԸ ՖԻԼԻՊԻՆՆԵՐՈՒՄ ԵՎ ՍԱԼԱՅԶԻԱՅԻ ՊԻՆԱՆԳ ԿՂԶՈՒՄ

Ռ. Ա. ԱՐԲԱՆԱՄՅԱՆ

Ֆիլիպինյան կղզիների գաղթօջախը Հեռավոր արևելքի անհետացած հայ գաղթօջախներից է: Հայ վաճառականները Ֆիլիպինների հետ կապեր ունեին այնտեղ եվրոպացիների հաստատվելուց առաջ: Հայտնի Կոստանդ վարժապետն իր նշանավոր «Մատյանում» որպես առևտրաշահ մի քաղաք հիշում է նաև Ֆիլիպինների կենտրոն Մանիլան, որը հայ վաճառականներին ծանոթ էր XVI—XVII դդ. սկսած: Հավանաբար հենց այդ ժամանակներից էլ առևտրի համար այստեղ հաստատված հայ վաճառականներն ու նրանց գործակիցները դարձան այն կորիզը, որի շուրջ հետագայում ստեղծվեց հայ գաղթօջախը: Այս գաղթօջախի հին շրջանի մասին քիչ տեղեկություններ ունենք: Պարզվում է, որ սկսած XVI դ. 70-ական թվականներից հայերի հոսքը դեպի Մանիլա ուժեղացավ: Հետաքրքիր է այն փաստը, որ չնայած իշխանությունների հրամանով խստագույն արգելքներ էին դրված Ֆիլիպինյան կղզիներ օտարաղզիների մուտքի վրա, ինչպես Չինաստանում և Արևելքի շատ երկրներում, հայերն այստեղ ևս բացարձակ ազատություն էին վայելում: Նրանք ոչ միայն ազատ ելումուտ ունեին, այլև հովանավորվում էին տեղական իշխանության կողմից²:

Նշված ժամանակամիջոցում Մանիլայում հաստատվող հայերը հիմնականում Զուդայից և արևելյան այլ երկրներից եկած առևտրականներ էին: Ինչպես վկայում են ժամանակակիցները, դեռևս այս շրջանից կղզիներում կատարվող թանկագին քարերի առևտրի մենաշնորհը հիմնականում հայ ակնավաճառների ձեռքում էր³:

XVII դ. վերջին—XVIII դ. սկզբին Հնդկաստանի տարբեր վայրերում հաստատվելուց հետո հայ վաճառականը «հոն կանգ չէր առնել և անկէ ալ առու» անդին կանցներ: Ան կմտներ Պրմանիա, Սիամ, Հնդկական օվկիանոսի կղզիները՝ Ճավա, Սումաթրա, Ֆիլիպինյան արշիպելագոնը, մանավանդ Մանիլա քաղաքը և Չինաստանի ծովափերը»,— գրում է Ա. Ալպոյաճյանը⁴:

1686 թ. Հնդկաստանում գործող Արևելահնդկական առևտրական ընկերության և տեղի հայ վաճառականների միջև կնքված հայտնի պայմանագրում Մանիլան հիշվում է այն քաղաքների թվում, ուր հայ վաճառականներն անգլիական նավերով ազատ ելումուտ և առևտրի իրավունք ստացան⁵: Այդ պայմանագրի շորորորդ կետում ասված է. «Հայերն ազատ իրավունք ունեն ընկերության ցանկացած կայանից ուղևորվելու Հնդկաստանի, հարավային ծովերի, Չինաստանի, Ֆիլիպինների նավահանգիստները»⁶: Ի դեպ Ֆիլիպիններում կոնկրետ նշվում է Մանիլան:

Երբ 1668 թ. անգլիական առևտրական ընկերության կենտրոնը Սուրաթից տեղափոխվեց Բոմբեյ, ընկերության վարչությունը հնարավոր ամեն ինչ

1 Մ. Մաշտոցի անվան մատենադարան, ձեռ. № 8448, էջ 148ա:

2 Ղ. Ալիշան, Որսակեսն, Վենետիկ, 1893, էջ 468:

3 Նույն տեղում:

4 Ա. Ալպոյաճյան, Պատմություն հայ գաղթականության, հ. Գ, Գահիրե, 1961, էջ 203—304:

5 „Brucés Donals of Honorable East-India Company for the years 1600—1708“, vol. III, London, 1806, p. 107.

6 Նույն տեղում, էջ 108:

արեց, որպեսզի Բոմբեյ տեղափոխվեն նաև Սուրաթի հայերը: Սուրաթի հայոց համայնքի ղեկավար, նշանավոր խոջա Մինասը տեղափոխվողներին էր և նոր վայրում դարձյալ հասավ փայլուն հաջողությունների: Դրանց զգալի մասը կապված էր նաև նրա՝ Մանիլայում առևտրատուն հիմնելու և Ֆիլիպիններից ապրանք արտահանելու ու այնտեղ ապրանք բերելու հետ:

Գ. Ագոնցը Մանիլայի հայկական հին վաճառականության մասին հետևյալն է գրում. «Այժմ յաղագաց, և ոչ յերոպացուց և ոչ յասիացուց կարող է անդ վաճառականութիւն առնել, բայց ի շինաց, հնդկաց և հայոց»⁷: Հավանաբար այստեղ էլ հայերի հեղինակությունը և նրանց նկատմամբ հարգանքը մեծ է եղել: Դրանով, անշուշտ, պետք է բացատրել այն փաստը, որ «ոմանք յօտար ազգաց կամեցեալ առևտրութիւն առնել անդանօր, յանուն հայոց առնեն»⁸: Այստեղ էլ, ինչպես Արևելքի շատ երկրներում, օտարադիրները, մեծ մասամբ և վրոպացիները, «ի հայոց առաքին վաճառականութիւն»⁹:

Հայ առևտրականները Մանիլայից հիմնականում արտահանում էին համեմունք, մետաքս, կերպասներ և զանազան այլ ապրանքներ:

Հայերն այստեղ սեփական նավեր համեմատաբար քիչ ունեին. նրանք հիմնականում օգտվում էին տեղական և իսպանական նավերից: Վարձում էին երկուական նավ և վաճառքն Արևելքի ու Եվրոպայի շուկաներում ավարտելուց հետո եվրոպական ապրանքներ (հիմնականում շաքար և արծաթ) բարձած վերադառնում էին Մանիլա¹⁰: Հայ վաճառականները Ֆիլիպիններ էին ներմուծում նաև ինչ-ինչ ճանապարհով ձեռք բերված «հայկական» կոշիկներ կատեսակը¹¹: Մանիլայի հայ փոքրիկ գաղթօջախն այս շրջանում կապող օղակ էր Հեռավոր արևելքի, Չինաստանի հայ գաղթօջախների և հնդկահայոց ու Նոր Զուլայի միջև:

Անգլիացիներին, անշուշտ, քաջ հայտնի էր Մանիլայի տնտեսական և ռազմական գերիշխող դիրքը ողջ Հեռավոր արևելքում: Նրանց քաջ հայտնի էր նաև ինչպես այնտեղ ապրող, այնպես էլ աղատ ելումուտ ունեցող հայ վաճառականների խաղաղած խոշոր դերն Արևելքի այս մասերում: Մանիլան աղատ առևտրի քաղաքների ցանկը մտցնելով՝ անգլիացիները հետապնդում էին սեփական ջանքերով: Օտարերկրացիների մուտքը խստորեն արգելող տեղական օրենքը մի կողմից, և անգլո-ֆրանսիական հակամարտությունը մյուս կողմից, այս կարևոր քաղաքի մուտքը գրեթե փակ էին դարձրել անգլիացիների համար: Հայերի հետ դաշնակցությունը հարմար առիթ էր այնտեղ ներթափանցելու համար: Շուտով բաղմամբիվ հայեր Հնդկաստանից, հատկապես Բոմբեյից, տեղափոխվեցին Մանիլա և ստվարացրին տեղի հայկական գաղթօջախը: Այս շրջանում էլ Ֆիլիպիններում գոհարավաճառության հիմնական ճյուղերը շարունակում էին մնալ հայ վաճառականների ձեռքում: Դրժբախտաբար ոչ մի տեղեկություն չունենք այդ ժամանակ Մանիլայում ապրող հայերի ներքին կյանքի և համայնքի աչքի ընկնող անդամների մասին: Տեղեկություններ չկան նաև գաղթօջախի թվական կազմի վերաբերյալ: Դատելով այն հանգամանքից, որ հայերն այստեղ եկեղեցի չեն ունեցել, պետք է, որ նրանց թիվը մեծ եղած չլինի:

Սիմեոն կաթողիկոս Երևանցու նշանավոր «Ջամբուում», որը կազմվել է 1765 թ., ի թիվս Հեռավոր արևելքի հայաբնակ վայրերի, հիշվում է նաև Մանիլան: Մեզ հասած մի քանի վավերագրեր նույնպես խոսում են այն մասին, որ XVIII դ. կեսերից սկսած էջմիածինն իրոք քաջածանոթ էր Ֆիլիպինյան կղզիների հայկական համայնքին: Մանիլան իբրև Նոր Զուլայի թեմի մեջ

7 Գ. Ա. գ ո ն ց, Աշխարհագրութիւն շորից մասանց աշխարհի, Ասիա, հ. Դ, Վենետիկ, 1806, էջ 306:

8 Ղ. Ա. լ ի շ ա ն, նշվ. աշխ., էջ 463:

9 Նույն տեղում:

10 Գ. Ա. գ ո ն ց, նշվ. աշխ., էջ 306—307:

11 Նույն տեղում:

մտնող հատված հիշատակվում է էջմիածնի հետ տարվող դրազրությունների¹²,

Ֆիլիպինյան կղզիների այս գաղթօջախը երկար կյանք չունեցավ: Երբ ինդոնեզական քաղաքների առևտրատնտեսական նշանակությունն աճեց, առևտրաուղիները փոխվեցին և Մանիլայի դերը սկսեց խամրել: Բնականաբար, հայերը մրցակցությանը դիմանալու համար չէին կարող չնետվել նոր ոլորտներ: Դրա հետևանքով Ֆիլիպինների կենտրոնում միայն տասնյակ հայեր մնացին:

Լուի XVI-ի կողմից նոր երկրներ հայտնաբերելու նպատակով այս շրջաններն ուղարկված հռչակավոր ծովագնաց Լա Պերուզը 1786 թ. Հայբրզյան կղզիներից ուղարկած զեկուցագրերում հիշում է Մանիլայում ապրող և առևտրով զբաղվող հայերի:

Այս շրջանում և հետագայում Մանիլայում ապրող հայերը մեծ մասամբ Հնդկաստանի հայկական խոշոր ընկերությունների առևտրական ներկայացուցիչներ էին, որոնք ղեկավարում էին տեղի մասնաճյուղերը: Նրանցից մեծ մասը մշտական բնակիչներ չէին և մի քանի տարին մեկ փոխվում էին:

Հավանաբար ոչ միայն Մանիլայի, այլև ընդհանրապես Հնդկաստանի ու Հնդկոտարեկյան գաղթօջախների պատմության մեջ հետաքրքիր երևույթ է Մանիլայի կապուչինների մենաստանում երկար տարիներ կրթություն ստացած և գրականությամբ զբաղված Տեր Մարտիրոսի որդի Զաքարիա Զուղայեցին: Նա ապրել և ստեղծագործել է XVIII դ. երկրորդ կեսին: Մեզ են հասել նրա աշխատություններից մի քանիսը: Հետաքրքիրը ոչ միայն այն է, որ Զաքարիա Զուղայեցին XVIII դ. կեսերին հասել է հեռավոր Ֆիլիպինյան կղզիները, սովորել կապուչինների մոտ, ստացել հոգևոր բարձր աստիճան, այլև այն, որ հայրենիքից շատ ու շատ հեռու ընկած վայրում գրաբարի անառարկելի տիրապետության պայմաններում ստեղծագործել է բացառապես աշխարհաբարով: Զաքարիա Դիակակոսս դե Սան Ֆրանցիսկո Ֆրանչեսկան (այդպես է նա իրեն անվանում) մեզ հասած իր բոլոր գործերի առաջաբաններում բավականին մանրամասն բացատրել է, թե ինչու է ինքը գրում կամ թարգմանում ոչ թե ավանդական գրաբարով, այլ ժողովրդին հասկանալի աշխարհաբարով: «Աշխարհաբար գրել է պատճառն էն էր,— գրում է նա,— որ խորհրդի, թե գրաբար շատ և շատ գրքեր կան, բայց աշխարհաբար ոչ մին չեմ տեսել և կարծում ամ, որ մեր հայոց ազգին, մասնաւորապես հասարակ աշխարհականաց և ժողովրդոց մեծ մասն գրաբար յիմանում չեն, վասն և գրքեր կարդալ սիրման չեն»: Դա և նման բազմաթիվ այլ պատճառներն են, շարունակում է Զաքարիան, որ իրեն ստիպել են աշխարհաբար գրելու, որպեսզի հասարակ ժողովուրդը կարդա, իմանա և «գլխե-գլուխ խասկանան, թե ի՞նչ եմ ասում, ընչի վրա եմ ասում»¹³:

Զաքարիա Զուղայեցու գրած մի մատյան Մանիլայից ընկել է Ռանգուն, որտեղից Ս. Մանուկյանն այն ուղարկել է Կալկաթա՝ Մ. Թադիադյանին¹⁴: Վերջինիս վրա հատկապես մեծ տպավորություն է թողել նրա նախաբանը, ուր հեղինակը դարձյալ մանրամասն խոսում է աշխարհաբարի առավելության մասին: Մ. Թադիադյանը, որը գրաբարի ջատագով էր և այն համարում էր ազգային միաբանությանն օժանդակող զինք, տուրք տալով ընթերցողների պահանջներին, «Ազգասեր Արարատյանում» տպագրում է Զաքարիա Զուղայեցու գրքի ընդարձակ առաջաբանը:

XIX դ. երկրորդ կեսին Մանիլայում ապրում էին հայեր, որոնք բաժանորդներ էին Հնդկաստանում, Իրանում, Թուրքիայում ու Եվրոպայում հրատարակվող թերթերի ու ամսագրերի:

¹² Ս ի մ ե ո ն Ե ր ե ա ն ց ի, Զամբո, էջմիածին, 1873, էջ 48:

¹³ Մ. Մալոյցի անվան մատենադարան, ձեռ. № 483, էջ 2ա:

¹⁴ Յուզակ Նոր Զուղայի Ամենափրկիչ վանքի մատենադարանի, հ. Բ, Վենետիկ, 1972, էջ 46:

Ըստ 1958 թ. Մանիլա այցելած Դերենիկ Փոլադյանի, հայկական կյանքն աչտաչ գրեթե մեռած էր և ապրում էին միայն անհատ հայ ընտանիքներ։ Շարունակում էր գործել «Իփեճյան» աղամանդի վաճառքի ընկերության մի մասնաճյուղը։ 1895 թ. հիմնված և ամբողջ Արևելքում մեծ հեղինակություն վայելող այդ ընկերությունը, որը երկրորդ աշխարհամարտի շրջանում անկում ապրեց, շնորհիվ իր երիտասարդ և շրջահայաց հայ կառավարիչների վերելք էր ապրում։ Այստեղ գործում էր նաև հայկական «Տատրյան» ընկերության մասնաճյուղը։ 1950-ական թվականներին հայ գաղութում, Դ. Փոլադյանի վկայությամբ, մեծ հեղինակություն վայելողներից էր Սարգիս Կարապետյանը։ Վերջին շրջանում գաղութն աննշան աշխուժություն ապրեց. այստեղ սկսեցին գալ և բնակություն հաստատել չինարենակ բազմաթիվ հայեր, բայց նրանց մեծ մասը ժամանակավոր կանգառից հետո հեռացավ դեպի Ավստրալիա։

Մալակկա թերակղզու արևմտյան ափի մոտ գտնվող Պինանգ հասանուն քաղաք-նավահանգստով կղզին, որպես Չինաստանի հետ կապող ծովային ուղիների վրա գտնվող հենակետ, առևտրական աշխարհին վաղուց է հայտնի։ Հայերը դեռևս XVII դ. վերջերին Պինանգում առևտրական գործարքներ էին կատարում, սակայն հայկական մնայուն գաղթօջախն այստեղ սկսել է կազմավորվել XVIII դ. վերջերից։ Պինանգում հաստատված առաջին հայերը Հնդկաստանում, Չինաստանում, Բիրմայում և Ինդոնեզիայում գործող հայկական խոշոր առևտրական ընկերության ներկայացուցիչներն էին։ Արդեն XVIII դ. Պինանգում կազմվել էին հայկական առևտրատներ և կազմակերպություններ, որոնք համարձակ մրցակցություն էին ծավալել եվրոպական, առաջին հերթին անգլիական առևտրական ընկերությունների հետ։

XIX դ. սկզբին Պինանգի հայկական համայնքի կազմակերպվածության, մարդաշատության և տեղի տարանցիկ առևտրում խաղացած զգալի դերի մասին է խոսում այն փաստը, որ քաղաք-նավահանգստի կենտրոնական փողոցներից մեկի վրա 1822 թ. կառուցվել է հայկական եկեղեցի, նրան կից քահանայի բնակարանով և հարակից այլ շենքերով։ Հավանականությունից հեռու են ինչպես Ա. Ալպոյաճյանի¹⁵, այնպես էլ Թ. Գուշակյանի¹⁶ և մյուս ուսումնասիրողների այն պնդումները, թե Պինանգի Գրիգոր Լուսավորչին նըվիրված հայոց եկեղեցին կառուցել են տեղի ընդամենը մի քանի տուն հայերը կամ էլ «այն խաչատուր Գալստյանի անձին համար է կառուցվել»։ Հայ մեծահարուստ վաճառական, ազգային գործիչ խաչատուր Գալստյան Շիրազեցին եկեղեցին կառուցելու համար հողամաս ձեռք բերելու և կառույցը ֆինանսավորելու գործում, իրոք, վճռական դեր է խաղացել, անգամ եկեղեցու ծախսերը հոգալու և քահանային աշխատավարձով ապահովելու նպատակով նա իր երկու խանութների տված եկամուտը եկեղեցուն է հատկացրել։ Սակայն վերջինիս կառուցման ծախսերի մեծ մասը հավաքվել է տեղի «հայազգի հայրենասեր բնակչաց հայեցուց» հանգանակությամբ, որոնք ցուցաբերել են «զնախանձելի օրինակ աստվածասիրութեան և ազգասիրութեան, յայսմ հեռաւոր կողմն աշխարհի»¹⁷։

1869—1870 թթ. Հնդկաստան և Հեռավոր արևելք կատարած այցի ժամանակ Երուսաղեմի նվիրակ Հովհաննես վարդապետ Մեծիփեկյանը եղել է նաև Պինանգում։ Այստեղ էլ, իր սովորության համաձայն, նա աշխատել է հավաքել այն նշխարները, որոնք մնացել էին երբեմնի հայկական գաղթօջախից։ Շնորհիվ Հ. Մեծիփեկյանի, այսօր ձեռքի տակ ունենք մի շարք հետաքրքիր փաստեր, որոնց օգնությամբ մասամբ հնարավոր է լինում վերականգնելու Պինանգի հայության պատմության մի քանի էջեր։ Այսպես, Պինանգի եկեղեցու և դրա կառուցման թվականից բացի ոչինչ հայտնի չէր։ Հ. Մեծիփեկ-

¹⁵ Ա. Ալպոյաճյան, նշվ. աշխ., հ. 3, էջ 442։

¹⁶ Թ. Գուշակյան, Հնդկահայեր, Երուսաղեմ, 1941, էջ 249։

¹⁷ «Աղգասեր», Կալկաթա, 1846, թիվ 66, էջ 115։

յանից առաջ և նրանից հետո այստեղ եղած ոչ մեկը որևէ այլ տեղեկություն չէր թողել դրա մասին: 2. Մեծիփեկյանը տվել է Պինանգի հայոց եկեղեցու հետևյալ նկարագրությունը. «Երկայնություն քսան և երկու քայլ և լայնություն ինն քայլ կարի սիրոյն տեսլեամբ շինություն մի է: Ի հիւսիս և հարաւ և ի յարեւմուտս սրահ ձգեալ է սիւնազարդ հաստատուած շինուածքով յաղիւսիայ թրքօնալ ութ և տասն սիւն ի հիւսիս, ութ և տասն սիւն ի հարաւ ի միշի վանդակապատ գեղեցիկ սալահատակ կազմեալ և աստիճանս վերելից: Շուրջ եկեղեցիաւ պարտէզ զանազան ծառոց և ծաղկանց և խոնարհ պարսպապատ ի վերայ շորից արքունական ճանապարհաց դրունս թողլով— և բնակություն քահանայի ուր ուրօք վայելուչ: Ամենայն ինչ եկեղեցւոյս վայելուչ է քան այլոց ազգաց յեկեղեցւոց և ձևաւոր կալկաթա, Ռանգունայ և Մանդալայ—յեկեղեցեաց մերոց»¹⁸: Ուղեգրողի հաղորդած այս տեղեկությունը հետաքրքիր և արժեքավոր է նաև նրանով, որ եկեղեցին վաղուց քանդվել և նրա փոխարեն այլ շէնք է կառուցվել:

2. Մեծիփեկյանը բերել է նաև ինչպես եկեղեցու որմերին եղած, այնպես էլ նրա բակի այժմ արդեն ոչնչացված շիրմաքարերի հայերեն արձանագրությունները: Եկեղեցու մուտքի ներսի վերին ճակատում եղել է հետևյալ արձանագրությունը. «Այս է տապան տիկին Վարդենք(ա)յ Խաչատրոյ Գալըստեան, որ փոխեցաւ յաստիացս ի չորս սեպտեմբերի 1839 ի հասակի երեսուն և չորս ամաց...»: Եկեղեցու գավթի պատին հայտնի վաճառական Հովսեփ Թորոսյանը ևս, ի հիշատակ 1852 թ. վախճանված իր կնոջ, արձանագրություն է թողել: 2. Մեծիփեկյանի ընդօրինակածների մեջ է Պինանգի մեծանուն վաճառական Գրիգոր Ղուկասյանի 26 ամյա որդու՝ Հովսեփ Ղուկասյանի հիշատակին նվիրված «Յիշատակ» արձանագրությունը: 2. Մեծիփեկյանը բերել է նաև միայն անունը, ազգանունը և մահվան թվականը պահպանված արձանագրությունների մի շարք՝ Հայրապետ Տեր-Գաբրիելյան՝ մահացած 1827 թ., Գրիգոր Հարությունյան՝ 1829 թ., Մարգար Կարապետյան՝ 1830 թ., Թադև-վոս Հարությունյան՝ 1849 թ., Մկրտիչ Հովհաննես Կարապետյան՝ 1833 և այլն¹⁹: Ուղեգրողը տեսել է նաև գետնատարած, առանց արձանագրության և շիրմաքարի բազմաթիվ գերեզմաններ, որոնք հասկանալի պատճառով մեծահարուստի կամ վաճառականի լինել չէին կարող:

2. Մեծիփեկյանի ընդօրինակած այս արձանագրությունների մասին փոքրինչ ծանրամասն խոսեցինք նաև հետևյալ պատճառով: Ինչպես ասել ենք, որոշ ուսումնասիրողներ, խորամուխ չլինելով փաստերի մեջ, Պինանգի հայկական գաղթաշխիթի վրա նրա բարգավաճման շրջանում հաշվում են մի քանի ընտանիք: Հասկանալի է, որ նման քանակությամբ հայերը մի քանի տարվա ընթացքում տասնյակ ննջեցյալներ տալ և սեփական գերեզմանատուն ունենալ չէին կարող: Այս փաստը ցույց է տալիս, որ մինչև XIX դ. 60—70-ական թվականները Պինանգի հայկական համայնքը, իրոք, եղել է բազմանդամ: Ինչպես շատ տեղերում, այնպես էլ այստեղ հայերն ապրել են հավաքական կյանքով և հավանաբար հենց այդ ժամանակ էլ կազմվել է իր անունը պահպանած հայաբնակ «Հայկական» կոչվող փողոցը²⁰:

1830—1840-ական թվականներին՝ Սինգապուրի արագ բարձրացման և միջազգային առևտրի խոշոր կենտրոն դառնալու տարիներին, թեև այնտեղ շատ հայեր տեղափոխվեցին, սակայն Պինանգում հայկական կյանքը կանգ չառավ: Հատկապես լայն էր նախատեր հայ վաճառականների գործունեության շրջանակը, որը ներառում էր «Բրիտանիա, այլ կողմանք Եւրոպոյ, Ամերիկա, Մարիտեա, Կալկաթա և մօտաւոր կողմանք նորա, Մադրաս և կողմն»

¹⁸ Երուսաղեմի Սուրբ Հակոբյանց վանքի մատենադարանի ձեռագիր № 2805, էջ 352:

¹⁹ Նույն տեղում, էջ 362:

²⁰ Ա. Բ. Կարիսյան, Անհրաժեշտ հայ պարբերական մամուլի պատմության, հ. 1, Երևան, 1956, էջ 361:

նորա, Բումբայ, Սիլան, Մուլմեյն և մօտավոր կողմանք նորա, Տեննասերիմ, Ալիև, Սենեստան, Բաթաիա, Աիամ, Դելի» և այլն²¹։

1840—1841 թթ. Պինանգ եկած 353 և դուրս եկած 354 առևտրանավերի մեջ զգալի տեղ են գրավել հայերին պատկանող «Հիրոս», «Արտաշ», «Հարու-թյուն Արգար», «Հովհաննես Մանուկ» և բազմաթիվ այլ հայանուն նավեր²²։ «Ազգասերը» 1846 թ. հրատարակել է հետևյալ հետաքրքիր փաստը. այն ժամանակ, երբ 1844—1845 թթ. Պինանգի նավահանգիստ են մտել անգլիական հինգ, եվրոպական տարբեր երկրներից՝ երեք, Ամերիկայից ժամանած երեք առևտրանավեր, ապա Սինգապուրից, Մադագասկարից, Կալկաթայից, Բոմբեյից, Ռանգունից, Բաթավիայից այստեղ են հասել հայ վաճառականներին պատկանող 111 նավեր՝ հազարավոր տոննա բեռներով²³։ Այդ վիճակը գրեթե անփոփոխ պահպանվել է նաև հաջորդ մի քանի տարիներին։

Մ. Թադիադյանն «Ազգասերում» 1847 թ. Պինանգին նվիրված բավականին ընդարձակ մի ակնարկաշար է հրատարակել։ Այնտեղ ուսումնասիրողը մանրամասն տեղեկություններ կարող է գտնել կղզու և նրա շրջապատի կյանքի բոլոր կողմերի վերաբերյալ։ Նրանում մեծաթման ջերմ տողեր կան՝ նվիրված մալայացի և շինացի աշխատավորությանը²⁴։ Ակնարկաշարում հատկապես ծավալուն տեղ է տրված Պինանգի առևտրին, ներմուծվող և արտահանվող ապրանքներին, դրանց տեսականուն, շրջանառության մեջ գտնվող դրամական չափի և կշռի միավորներին, առևտրամասերին, գանձվող տուրքերին և այլն։ Տպագրելով այս բոլորը, Մ. Թադիադյանը, հավանաբար, առաջին հերթին նպատակ ուներ իր հայրենակիցների ուշադրությունը հրավիրել անգլիական տիրապետությանից դուրս մնացած և առևտրական խառնուրդում գտնվող այս կղզու վրա։

1846 թ. հրատարակված «Արամայիսում» Պինանգի հայության վերաբերյալ տպագրված մի հաղորդագրությունից իմանում ենք, որ, ընայած թրվապես նվազելուն, գաղթօջախը կղզու առևտրական կյանքում շարունակում էր ակտիվ դեր խաղալ²⁵։

Աշխարհի այս հեռավոր անկյունում բնակվող հայության մասին լավ գիտեին նաև էջմիածնում։ Մ. Թադիադյանը հրատարակել է ներսես Աշտարակեցու կոնդակներից մեկը, որը գրված է 1851 թ. դեկտեմբերի 31-ին և ուղղված է հնդկահայերին։ Այս կոնդակին Մ. Թադիադյանը կցել է մի ծանոթագրություն, որով ճշտել է նրանում եղած տեղանունների ցանկը։ Էջմիածնապատկան հայկական թեմերի մեջ մտնող այդ գաղթօջախների շարքում հանդիպում ենք նաև Պինանգին²⁶։ XIX դ. 50—70-ական թվականներին Պինանգում գործող հայկական կազմակերպություններից ամենանշանակալիցը Հնդկաստանում գործող «Արևելյան ապահովելոց» առևտրաարդյունաբերական ընկերության և նշանավոր «Աբգարյան ընկերության» մասնաճյուղերն էին։ Վերջինս կառավարում էր Մատուր Հարությունյան Անտոնյանը՝ իր տասներեք հոգուց բաղկացած ընտանիքով։ Ի դեպ, նա նաև տեղի հայ քահանա Հակոբ Հայրապետյանի հետ միասին ղեկավարում էր Պինանգի հայկական համայնքը։ Պինանգի հայությունն ամուր թելերով կապված էր հայրենիքի, հատկապես հարևան երկրների հայկական գաղթօջախների հետ և հաղորդակից էր հայկական կյանքին։ Հեռավոր այս կղզում էլ հայերը հայկական թերթեր էին ստանում։ Անգամ «Ազգասերը», «Աղբասեր Արարատյանը», «Ուսումնասերը» ոչ միայն ընթերցողներ, այլ նաև թղթակիցներ և «գործակալներ» ունեին Պինանգում։

21 «Ազգասեր», 1846, թիվ 71, էջ 155—156։

22 M. J. Seth, Armenians and the East India Company, Calcutta. 1937, p. 6.

23 «Ազգասեր», 1847, հ. Գ, էջ 64։

24 Նույն տեղում, էջ 63։

25 «Արամայիս», Կալկաթա, 1846, էջ 46։

26 «Ազգասեր Արարատյան», 1851, հ. Գ, թիվ 72, էջ 569։

Որ XIX դ. կեսերին Պինանգում հարուստ հայկական գաղութ է կղել, ևրե-վում է այն բանից, որ Հեռավոր արևելք հասած գրեթե բոլոր նվիրականները՝ լինելն դրանք էլ միաժամանակ, նոր Զուլայից, թե Երուսաղեմից առաքված, այ-ցելել են նաև Պինանգ։ Մեզ է հասել Երուսաղեմի նվիրակ Հ. Մեծիրիսկյանի առաջարկով տեղի հայերին Պինանգի քահանա Հայրապետ Բաշխամյանցի հղած ուղերձը՝

«Գերապատիւ Ժողովրդոց Ազգիս Հայոց բնակելոցդ ի Պինանկ

Մեծապատիւ պարոնայք և պատուելիս հայ տիկնայք։

Առաքելական ատենությունն է բարեպաշտ քրիստոնէից մասնակցել սրբ-յազան տեղեաց Փրկչին, որ յԵրուսաղէմ տասնորդել յարդար վաստակաց իւ-րեանց վաղեմի բնածիր ջերմեռանդութիւն Ձեր։ Յայտնի գուով գալ այցելու ի սրբազան տեղեաց տէր Սրբազան՝ Ներսէս վարդապետի իբրև հոգևոր հայր Ձեր լինի առատօրէն նուիրել Ձեր բարեպաշտական և տուրս Սուրբ տեղաց Քրիստոսի, մանաւանդ յօգուտ ևս բարոյականութիւն աշխատութեանն Ազգա-յին վանանցն Երուսաղէմի

Ի Պինանկ 1869

գեկտեմբեր 24.»²⁷։

Յավոք, ոչ Ներսէս վարդապետը և ոչ էլ որևէ այլ աղբյուր չեն հաղորդում այն մասին, թե այս ուղերձն ինչ արձագանք է գտել Պինանգի «գերապատիւ» հայ ժողովրդի մեջ։ Հիմք ընդունելով Պինանգից Երուսաղեմի նվիրակի գրած մի նամակը՝ ուղղված նշանավոր «Աբգարյան ընկերության» ղեկավարության-նը, որով նա հայտնում է, թե ապահովության համար իր մոտ եղած հազար հարյուր վաթսուն ռուպի գրամը մինչև Կալկաթայից Երուսաղեմ մեկնելն ու-ղարկւմ է ի պահ, կարելի է ենթադրել, որ Պինանգի հայությունը ակտիվորեն է մասնակցել հանգանակությանը։

XIX դարի Պինանգի հայության մասին եղած տեղեկություններն ամբող-ջական պատկերացում չեն տալիս գաղթօջախի վերաբերյալ։ Հովսեփ Անտոն-յանի և Արշակ Սարգսյանի մոտ 1917 թ. պահվելիս է եղել եկեղեցապատկան մի գումար, որից 300 ռուպի բաժին է հանվել «ի նպաստ ազգային կարեաց հանգանակութեան գործին»²⁸։ Պինանգի հայերը 1917 թ. Բ. Գուշակյանին խնդրել են միջնորդել կաթողիկոսի առաջ՝ տնօրինելու իրենց մոտ մնացած եկեղեցապատկան գումարը և կարգադրություն անելու նաև հայկական եկե-ղեցու տարածքի հետագա ճակատագրի վերաբերյալ։

1927 թ. «Արևում» տպագրված համառոտ մի հաղորդագրությունից իմա-նում ենք, որ Պինանգում կային հայեր, որոնց ձեռքին էին քաղաքի մի քանի խոշոր հյուրանոցները։ Հիշյալ ժամանակ հայկական գաղթօջախի ճանաչված անդամներից էին էդգարյան հայտնի ընտանիքի զավակներ Արշակ և Սար-գիս էդգարյանները, Չարլզ Աբգարը, որը նշանավոր Աբգարյան տան զա-վակն էր և «ինքն էր շինել իր կյանքի պատմությունը, չի ապավինել իր նշա-նավոր միլիոնատեր պապի և հոր ավանդներին... և սեփական ջանքերով բարձրացել է քաղաքի ամենից ճանաչված և մեծահարուստ մարդկանցից մեկի աստիճանին»։ Մի քանի անգամ «միլիոնատեր եղած, կորսուցած և նորեն գտած է»։ 1927 թ. նա նորից «սանդուխքի առաջին աստիճանին բարձրացած է»։ Հետաքրքիր է, որ աշխարհի հեռավոր անկյունում միլիոնատեր այս հայն «արտասովոր հետաքրքրությամբ կուզի իմանալ ամեն բան, ամեն մի ման-րամասնություն Սովետական Հայաստանի մասին, կարդում է այն ամենը ինչ կար հայրենիքի վերաբերյալ և ուզում էր իր հարստությամբ վերադառնալ հայրենիք, իր հեռ բերելով իր միլիոնները և մասնակից դառնալ իր վերա-ծնված հայրենիքի վերաշինությանը»²⁹։

1930-ական թվականների սկզբին Պինանգում մնացել էին հատուկներտ հայկական ընտանիքներ։ Տեղական իշխանությունները, օգտվելով այն բա-

27 Երուսաղեմի Սուրբ Հակոբյանց մատենադարանի ձեռագիր №. 2605 գ. Ի. 353։

28 Բ. Գուշակյան, Նշվ. աշխ., էջ 249։

29 «Արև», Կահիրե, 21. VIII. 1922։

նից, որ հայերն ալլևս եկեղեցի չեն հաճախում և այն խարխլվել է, որոշել էին խլել հայերին պատկանող եկեղեցու տարածքը և քանդել եկեղեցին՝ նրա տեղում այլ շինություն կառուցելու համար³⁰։ Իշխանությունների այդ որոշման դեմ Սինգապուրի հայերի եկեղեցական վարչությունը բողոքեց։ Դատարանը երկար քաջըջուկից հետո ստիպված եղավ վճիռ կայացնել հօգուտ հայերի, և հայոց եկեղեցին մնաց անձեռնմխելի։ Բայց հետագայում Սինգապուրի հայոց եկեղեցական վարչության անդամներ Ս. Հովհաննիսյանը, Մ. Հակոբյանն ու քահանա Ս. Շամամյանը եկեղեցին, դրան կից կառույցները և շրջակայքի հողամասը՝ 34.000 դոլլարով՝ վաճառում են ու հիմնում «Խաչատուր Գալըստյան» անձեռնմխելի ֆոնդը, որի տոկոսներով մինչև 1950-ական թվականները պահվում էր Սինգապուրի ս. Գր. Լուսավորիչ եկեղեցին³¹։

Պինանգի եկեղեցու հոգաբարձու Արտաշես Սարգսյանի ջանքերով կորստից փրկվեց նաև Պինանգի եկեղեցու գույքը, որը հանձնվեց Սինգապուրի Հայոց եկեղեցուն։

Վերջին հայերը Պինանգից հեռացան երկրորդ համաշխարհային պատերազմից հետո։ Նրանք քաղաքի հռչակավոր «Օրինետալ» հյուրանոցի տեր Տիգրան, Սարգիս, Արշակ և Մարտիրոս Սարգսյան եղբայրներն էին։ Սարգսյանները վաճառեցին ինչպես «Օրինետալը», այնպես էլ Պինանգի հյուսիսում գտնվող ամառանոցային վայրի իրենց հյուրանոցները և հեռացան։ 1957 թ. իր կարճատև այցի ժամանակ Թ. Գուշակյանն այստեղ տեսել է միայն մի քանի տուն հայի Հայկական եկեղեցին Թ. Գուշակյանը գտել է կիսավեր վիճակում։ «Սրբավայրը, — գրել է նա, — կմնա կրօնական հաստատութեան մը վաւելու իր պատկառազդիկ դիրքին մէջ, սրբուած՝ սալարկուած և շրջափակուած, իր ծոցին մեջ ամփոփելով տասնեակ տապանաքարեր, որոնց վրա գրաբար անմահ կնիքը կդնէ իր անմեռ գեղեցկութեամբ, նորանին տեղը կանգնած է գոթական գմբեթով և սիւներով քարով իր ամենասիրուն տաղաւար մը, որը կլրացնէ սրբավայրին եկեղեցական մեծավայելչութիւնը»³²։

Եթե նախկին որոշ գաղթօջախներում որպես անցյալի հուշ գոնե մնացել են հայկական անուններ կրող փողոցներ, հայկական եկեղեցիներ ու հայատառ մամուլակալող շիրմաքարեր, ապա Պինանգի հայկական անցյալից այդ էլ չմնաց։ Վերջին հուշը հայկական եկեղեցու տարածքում մնացած մոտ քսան գերեզմաններն էին, որոնք եկեղեցու տարածքին տեր դարձած վարչությունը քանդեց։ Ննջեցյալների աճյունները տեղափոխվեցին անգլիական գերեզմանոց և ամփոփվեցին մի գերեզմանում։

АРМЯНЕ НА ФИЛИППИНАХ И НА МАЛАЙЗИЙСКОМ ОСТРОВЕ ПИНАНГ

Р. А. АБРАМЯН

Р е з ю м е

С середины XVI в. армяне основали поселение в столице Филиппин, пользуясь, как и повсюду на Востоке, правом свободной торговли. Армянские купцы вывозили с филиппинских островов (преимущественно из Манилы) пряности, шелка, жемчуг и драгоценные камни. Находившаяся на пересечении крупных морских торговых путей Манила стала своеобразным связующим звеном между армянскими колониями Индии, Бирмы, Китая, Дальнего Востока и Ирана.

Период расцвета армянской общины в Маниле—II половина XVIII в.—активизировал национально-культурную жизнь колонии, дав

³⁰ «Պայթար», Բոստոն, 24. VI. 1958.

³¹ Նույն տեղում։

³² Նույն տեղում։

впоследствии выдающегося деятеля—Закарию Джугаеци ди Франческо, оставившего нам ряд художественных произведений на ашхарабаре.

На острове Пйнавг армяне поселились с середины XVIII в. В 1822 г. ими была построена здесь армянская церковь. Армянская община Пйнанга жила активной национально-культурной жизнью. В 50—70-х гг. XIX в. бурную деятельность развернули там несколько армянских торговых компаний, контролировавших значительную часть экспортно-импортных операций. Однако уже в 30-х гг. XX в. на острове осталось всего лишь несколько армянских семей, Манилу же армяне покинули в конце 1950-х гг.